

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ  
2024

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԵՎ  
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

**1** Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում փակագծերում նշված տառը:

- 1) կոր-նթարդ, որոտ-նիոստ, առ-նթեր, սր-նթաց (ը)
- 2) վար-աբեկել, քողտի-, փա-ցնել, շա-անակ (կ)
- 3) կր-սեր, ճ-քավոր, մթնոլոր-, զար-ուղի (տ)
- 4) անե-ք, հանդիպակա-, փայ-ադ, մա-ուցիկ (ծ)

**2** Ո՞ր շարքի բոլոր բառերում *յու* երկինչյուն կա:

- 1) հ-րասենյակ, հ-սնություն, ընկ-գ
- 2) դ-ցազն, աջհամբ-ր, հար-րյակ
- 3) մրջ-ն, կապտաք-ր, ալ-ր
- 4) ար-նարբու, դ-րընթեննելի, անըստգ-տ

**3** Ո՞ր շարքում բաղադրյալ հասուկ անվան գրության սխալ չկա:

- 1) Բերմուդյան եռանկյունի, Շրի Լանկա, «Հայկական Ավիաուղիներ» ընկերություն
- 2) Մաղաքիա Մարգարե, Սիկլուխտ Մալկայ, Մարիանյան իջվածք
- 3) Կարսի թագավորություն, Հայկական լեռնաշխարհ, Վինսենթ Վան Գոգ
- 4) Իսրայելի Պետություն, Սարգս Պիծակ, Գողթն գավառ

**4** Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) ճարպկություն, ծննդատուն, մարմնամարզուիի
- 2) նստակյաց, չվացուցակ, գրագետ
- 3) փորորկահույյօ, կղզերնակ, տարկետուս
- 4) կավճափոշի, վրձնահարված, ընչացք

**5** Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ԾԿԶ-756
- 2) ՄԴԵ-294
- 3) ՔՅԽՆԹ-9339
- 4) ՑՉԻԳ-6723

**6** Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) *գորդյան հանգույցը կտրել*-լուծել դժվարին, խճճված խնդիրը
- 2) *բոլոր կամուրջներն այրել* -միշտ հարձակվողի դերում լինել
- 3) *Ռուրիկոնն անցնել* -վճռական քայլ կատարել
- 4) *Խարիսխն ցցել*-ժամանակավոր բնակություն հաստատել

**7** Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից մեկին) *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) **-ային** -գիտխորհուրդ, նրբաջիղ, դիրքավորում
- 2) **-ու** -քնակվարձ, առաստաղ, այցելություն
- 3) **-մուճք** -համտեսել, ավարատենչ, անասնակեր
- 4) **-անի** -տեսակավորել, վարչապետ, գեղջուկ

**8** Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) վարքագիր, վաբունիինգ, հանքաքար, հուշարձան
- 2) հրակայուն, խորհրդատու, աներկրա, թանկարժեք
- 3) սրտմտանք, չարաղետ, դարակազմիկ, գույքահարկ
- 4) հերթագայություն, կայանատեղ, բանտարկյալ, խորաքնին

**9** Ո՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ կա:

- 1) Ցոլակը նրա ձին էր՝ կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ:
- 2) Սիրիավ կար անտառում, թռավ արնակողոլ, երկու փետուր մնաց փափուկ մամուչների վրա:
- 3) Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:
- 4) Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչուսող եղնիկի վճիռ հայացքի արտապատկերն է դա:

**10** Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն բառերի համարները, որոնց բոլոր բաղադրիչների բանակները ճիշտ են տրված:

1. քանձրամտորեն = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
  2. պատվարժան = 2 արմատ, 2 ածանց, 1 հոդակապ
  3. արձակագիր = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
  4. կուսակցական = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
  5. տնտեսվարություն = 3 արմատ, 1 ածանց
  6. վերնախավ = 2 արմատ, 1 հոդակապ
- 1) 1, 4, 5
  - 2) 1, 2, 3, 5
  - 3) 2, 4, 5, 6
  - 4) 2, 3, 4

**11** Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ չկա:

- 1) Մարիամը եկավ, բեռլ շալակին՝ դեմ ընկավ ծառին ու ճոճվեց, ուզեց գերանին հենվել:
- 2) Ալխոյին թվաց, թե ինքը ճորից զաղիվերով բարձրացել է և ահա զնում է իրենց դրւոր:
- 3) Ալխոն մենակ արտ չի մտնում, որովհետև միթևանի հանդապահը գոռզոռում է, իրեն օրերով փակում են ցեխսոտ գոնում:
- 4) Ծառերը չեն ճոճվում, ցողունները չեն շարժվում, ծաղկները բացվել են, արևի տակ ամեն ինչ փայլում ու շողշողում եր ակնախտիղ լույսով:

**12** Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակրայներ:

- 1) անմիջապես, բացեիրաց, եռյակ
- 2) հազիվիազ, խստիվ, օրեցօր
- 3) մոտակա, մշտապես, հիմնովին
- 4) նորից, այնպես, դիտմանք

**13** Ո՞ր նախադասության մեջ ներկա ժամանակի բայաձև չկա:

- 1) Այդ մարդը Արարատ լեռան գագաթը տեսնելուն պես ուրախության նշաններ է ցույց տալիս:
- 2) Նա զիտի, որ ինքը բարձրանալու է այն լեռան գլուխը և տեսնելու է իր ցնորքի աշխարհը:
- 3) Իմ երգերի ձայնից, իմ երգերի Էլ չեն զարբնում քնած երգերը քո:
- 4) Նա հետ դարձավ, դիմացը տեսավ մի վանականի՝ մագաղաթը սեղմած դալուկ ձեռքերի մեջ:

**14** Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց հոգնակին կազմվում է -ներ վերջավորությամբ:

1. խորագիր, 2. սպա, 3. ոտնաձայն, 4. հարթաչափ, 5. ծովախույզ, 6. հեռախոս,
7. դեղատուն, 8. տոնածառ, 9. հրաբուխ

- 1) 1, 4, 5, 7, 9
- 2) 2, 3, 4, 7, 8
- 3) 1, 2, 3, 7, 8
- 4) 2, 4, 5, 6, 9

**15** Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն չկա:

- 1) Ես ինչպես կարող եմ անընդհատ հուսալ, որ կփոխվես, ճիշտ վարքով կապրես:
- 2) Այդ մարդիկ, որոնք աշխարհի չորս ծագերից եկել հավաքվել են, պիտի հետևեին ցլամարտին:
- 3) Նա արագ մոտեցավ այն սենյակին, որտեղ քնած էին տանտերն ու նրա երիտասարդ կինը:
- 4) Ոչ ոք չի ասում այն, ինչ մտածում է, բայց ամեն ոք խոսում է ազնվությունից:

**16** Ո՞ր նախադասության մեջ կոչական կա:

- 1) Եվ մի՞թե այդ վշտիդ համար Չեմ սիրում քեզ այդպես քնքուշ Եվ խոնարհվում քեզ պես համառ, Օ՛, հայրենիք՝ դառն ու անուշ:
- 2) Աշխարհին, այո՛, մաքրություն է պետք:
- 3) Տիտուր երեկոն զարկել է վրան, Սիրտս կարտով կանչում է քեզ, Եկ:
- 4) Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, ել չեմ գալու, Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՞ք բարով, մնա՞ք բարով:

**17** Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Կառքից իջավ մի չափահաս մարդ ծամերի մեջ արդեն սպիտակ ալիքներով ընտանի քայլերով մոտեցավ դրանը և բախեց դրան երկաթը երեք անգամ ըստ վաղեմի սովորության:
- 2) Անտառների դողանջներն ասես անդորրություն են սփռում հուտքի դաշտերի վրա և խառնվում սարերի մշուշին:
- 3) Բարձրացավ արել և բարի ժայտաց աշխարհին իր ոսկեզօծ շողերով ողողելով կիրճի արևահայաց լանջերը:
- 4) Զմեռը նատում էր բուխարու մոտ և չոր փայտող դարսելով կողքին փայտերը մեկ-մեկ զցում էր կրակի մեջ պատմություններ անելով շահի ժամանակից:

**18** Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Որքա՞ն լավ է մարդկանց՝ քեզ վստահելը:*  
Որքա՞ն լավ է, եթե մարդիկ քեզ վստահում են:
- 2) *Հրատապ խնդիր է երկու քունելախորշերի միանալը ճիշտ ժամկետում:*  
Հրատապ խնդիրն այն է, որ երկու քունելախորշերը միանան ճիշտ ժամկետում:
- 3) *Սեծահամբավ ցլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավագը կխսի նրա արյունը:*  
Սեծահամբավ ցլամարտիկը տապալվի թե չէ, կրկեսի անտարբեր ավագը կխսի նրա արյունը:
- 4) *Թռուցիկը պատմում էր դեկավարներից մեկի՝ Թիֆլիսում ինքնասպան լինելու մասին:*  
Թռուցիկը պատմում էր այն մասին, որ դեկավարներից մեկը Թիֆլիսում ինքնասպան է եղել:

**19** Ո՞ր տարրերակում է ստորադաս նախադասությունը ժամանակի պարագա:

- 1) Մարդը շան հետ ընկերացավ թե չէ, մարդակերության սովորությանը վերջ տվեց:
- 2) Ամեն առավոտ, երբ բոլորս դեռ քնած էինք լինում, պապս ոտքի վրա էր:
- 3) Տղաները գյուղ վերադարձան այն գիշերը, երբ իրենց ուտելիքի պաշարը վերջացել էր:
- 4) Կային ժամանակներ, երբ հայ ժողովուրդը պայքարում էր հանուն մի պատառիկ հողի:

**20** Գործառական ո՞ր ոճով է շարադրված տրված հատվածը:

*Սեր իրետանին կանգնել էր Սեծամոր բլրի տակ, և նրան չէին օգնում ոչ իին մազադարները, ոչ իիքտուները, ոչ էլ Երկիրը գնդած զիտնականները։ Եվ աղերսում էին զեք Արարատյան հանրապետություն, ինվտի գոնե կեսը։ Ամբողջ օրը մեր իրետանին քանդուքարափ էր անում մեր Սարդարապատը, ապա տղերքը լծվեցին և եզան պես առանց ձայնի արտասվելով՝ թնդանորները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր։ Ալարտան։ Հետո թշնամին գովել էր, թե այդ հայերը կարծեն թե տղամարդ եմ. կովում եմ։*

- 1) պաշտոնական
- 2) առօրյա-խոսակցական
- 3) գեղարվեստական
- 4) զիտական

**21** Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր զուղատեղ փոխադրվելու հարցը, ճրագի քույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի հետևում մի պահ չերևացին փափախները. ....*

- 1) թվաց, թե հակա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած առաստաղը:
- 2) մինչեռ ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփոռել սրահում:
- 3) որոնք ուրախ աղմուկով դուրս եկան:
- 4) որովհետև ճրագը բարբում էր լույսի հետ և տաքություն տալիս:


**22**

Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Բայց դեռ երկար ճանապարհ կար անցնելու կառուչուկի և ծծմբափոշու խառնուրդից ջերմության ու ցրտի նկատմամբ չեզոք նյութ ստանալու համար, որպեսզի կաշվե կոշիկների համեմատ կառուչուկն ոտնամանները առավելություն ունենային:
  2. Պերուի հնիկացիներն այդ գանգվածից երկարաձիտ կոշիկների նմանվող բաներ էին ծեփում և հազնում անձրևների ժամանակ:
  3. Արտաքուստ ոչնչով աչքի չընկնող ծառ է Հարավային Ամերիկայի արևադարձային անտառներում աճող հենան, որի կեղևի կտրվածքներից թանձր խեժ է հոսում:
  4. Երկար ժամանակ միայն կաշվե կոշիկներ հազնող և մշտապես անձրևներից նեղվող եվրոպացիները, առաջին անգամ հայտնվելով Պերուում, իրենց հետ տուն տարան հենայի պնդացած հյուրը՝ տեղացիների ասած կառուչուկը, որին տրվեց նոր անուն՝ «գումինաստիկ»:
- 1) 4, 2, 1, 3
  - 2) 3, 2, 4, 1
  - 3) 4, 3, 1, 2
  - 4) 3, 1, 4, 2

**23**

Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Այդ նշանավոր տարվա հոկտեմբեր ամսվա վերջին Պալե-Ռոյալ մտավ մի երիտասարդ ճիշտ այն րոպեին, երբ խաղատները բացվում էին՝ համաձայն այն օրենքի, որ պաշտպանում է անխուսափելի դարձած կիրքը:
- 2) Այդ միջոցին, երբ դուք մտնում եք խաղատուն, օրենքը նախ և առաջ ձեզնից խլում է ձեր գլխարկը, որպեսզի դուք հարգալից կեցվածք ընդունեք նրանց առջև, ովքեր խաղի մեջ խելու են ձեր գումարը:
- 3) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծիսի մի այուն տեսնելու, բայց թվում էր, թե մառախուղը րոպե առ րոպե նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:
- 4) Մի՞քեն կլունական որևէ հույզ, հոգածության որևէ նշույլ չկա այդ վերաբերմունքի մեջ, որ շռայլվում է սիրած էակի նկատմամբ, որը դեռ չի կարող այն գնահատել:

**24**

Դ. Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում նշվածներից ո՞վ է հրաժարվում մասնակցել Հազկերտի հրովարտակի պատասխան նամակի համար Արտաշատի վանքում հայ աշխարհիկ և հոգևոր այրերի ժողովին:

- 1) Վարդան Մամիկոնյանը
- 2) Սովոր Խորենացին
- 3) Արվանձտյա Գալեզինը
- 4) Վասակ Սյունին

**25** Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞ւմ սխալ չկա:

- 1) - Զատիկ եմ ուզում, - լացակումած ասաց երեխան եղբորը, - խնդրում եմ, ինձ համար մի զատիկ գտի՛ր:  
Երեխան լացակումած ասաց, որ զատիկ է ուզում, և խնդրեց եղբորը, որ իր համար մի զատիկ գտնի:  
2) - Քեզ ձի կնատեցնեմ, ես ու դու ձիով կզնանք կայարան, հայրիկին կայարանից  
կրերենք, - ասաց մեծ եղբայր:  
Մեծ եղբայրն ասաց, որ նրան ձի կնատեցնի, իրենք ձիով կզնան կայարան, հայրիկին կայարանից կրերեն:  
3) - Դրանք ձմեռվա համար չե՞ն, - նայելով իրեն մեկնված կոշիկներին՝ զարմացած  
հարցրեց տղան:  
Նայելով իրեն մեկնված կոշիկներին՝ տղան զարմացած հարցրեց, թե դրանք  
արդյոք ձմեռվա համար չեն:  
4) - Չո գործն է, - ասաց տղան փոքրիկ երեխային, - ուսում ես՝ կե՛ր, բայց հետո չասես,  
թե փոքր ցավում է:  
Տղան փոքրիկ երեխային ասաց, որ նրա գործն է, ուսում է՝ թող ուտի, բայց հետո  
թող չասի, թե փորս ցավում է:

**26** Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեի վերաբերյալ մտքերից որո՞ւմ  
սխալ կա:

- 1) Կովի դաշտում Շահին խորհուրդ են տալիս, որ փորձի տիրել Թմկա տիրուհու  
սրտին, և այդ դեպքում Թաքուլը անզոր կինի նրա առաջ:
- 2) Թմկա տիրուհին հարթեցնում է Թաքուլին և նրա հաղթական գորքին ու թշնամու  
առաջ բացում բերդի դռները:
- 3) Շահի ուղարկած պատվիրակները մեծամեծ ընծաներով կարողանում են համոզել  
Թմկա տիրուհուն դառնալ Շահի կինը:
- 4) Նադիր Շահը բազմիցս փորձել էր գրավել Թմկաբերդը, բայց կոհվը միշտ  
ավարտվել էր Թաքուլի հաղթանակով:

**27** Գ. Զոհրաաի ո՞ր հերոսի մասին է տրված խոսքը.

«Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված  
տուները կողոպտելով, ու հոժարությամբ ետ այսի տար գողոնը, թե որ բռնվելու վախը  
չըլլար»:

- 1) Հուսեփի
- 2) Սահակի
- 3) Սարտիրոսի
- 4) Զաքուլոնի

**28** Ո՞ր տողով է ավարտվում Մ. Սեծարենցի «Աքասիաներու շոքին տակ»  
բանաստեղծությունը:

- 1) Ի՞նչ հեշտին է մըբնշաղն այս սատափե
- 2) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե
- 3) Նըլվագն անոր կը հեծեծե հեշտական
- 4) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե

**29** Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

...Եվ հավատացինք, հարրած ու զինով,  
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի՝ –  
Իսկ նրանք եկամ՝ արյունով, հրով  
Մեր երկիրը հին դարձրին փոշի...

- 1) «Մահվան տեսիլ»
- 2) «Վահագն»
- 3) «Դանքեական առասպել»
- 4) «Անվերնագիր»

**30** «Սասնա ծոեր» Էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք քնազիր) ո՞ւմ գերեզմանին է Բաղդադում այցելում Փոքր Սհերը:

- 1) Բաղդասարի
- 2) Քեռի Թորոսի
- 3) Զենով Հովանի
- 4) Գագիկ բազավորի

**31** Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աշքին առաջ, և ես ճգնում էի իմանալու՝  
ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ քվաց»:

- 1) «Ալյիական մանուշակ»
- 2) «Միրհավ»
- 3) «Խոնարի աղջիկը»
- 4) «Սպիտակ ձին»

**32** Ո՞ր բառն է բաց քողած:

Եղեգնյա զրշով վրեժ երգեցի.  
Հնայ եղեգան փող .....ելաներ:

- 1) սի՞րոս
- 2) բո՞ց
- 3) ն՞րբ
- 4) լո՞ւս

**33** Նախադասության մեջ գործածված բառերից որո՞նց ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

Մարզարիտան դադարել էր տեսնել, թե ինչ է կատարվում դռնապանի սենյակի խորրում, բայց իրեն հասնող աղմուկը ոչ մի լավ բանի մասին չէր խոսում:

1. խորքում – գոյական, ներգոյական հոլով
2. իրեն – անձնական դերանուն, սեռական հոլով
3. տեսնել – կանոնավոր բայ, սուկածանցավոր
4. հասնող – ենթակայական դերբայ, ներգործական սեռ
5. մասին – կապ, հետադրություն
6. դադարել – վաղակատար ձևաբայ

**34** Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:

1. ատենադպիր, 2. մարդկայնորեն, 3. հավիտենական, 4. սննդարար, 5. արնանման,
6. միջնակարգ, 7. քոչուն, 8. աշխուժանալ

**35** Ո՞ր բառերն են հոդակապով:

1. ուղեկցորդ, 2. վրիժառու, 3. ձայներիզ, 4. փառամոլ, 5. հպատակ, 6. բարեգութ,
7. անարգանք, 8. շնորհակալ

**36** Ո՞ր նախադասություններում ընդգծվածը շաղկապ չէ (նախադասությունները կետադրված չեն):

1. **Նախրան** պատաճու հարցին պատասխանելը նա ուղեպայուսակից հանեց զանազան ուժեստներ:
2. **Թանի դեռ** ճրագը վառվում էր երրորդ մարդը աչքերը լաթով կապած նստած էր սենյակում:
3. **Հենց** ինձ էիր ուզում բոլորի առաջ նկատողության արժանացնել:
4. Այսօր ժամանակ չենք ծախսելու խնդրի լուծման **այլ** տարբերակների քննարկման վրա:
5. **Մինչ** սողունը փախչում էր երիտասարդից վերջինս հետապնդում էր նրան:

**37** Ո՞ր նախադասություններում կետադրական որևէ նշան պիտի դրվի:

1. Գառնու տաճարի կողքին պահպանվել է բաղնիքի տասնինգ գույնի բնական քարերից պատրաստված խճանկարով հատակը:
2. 1242 թվականի ապրիլի հինգին Չուդ լճի սառույցների վրա տեղի ունեցավ պատմության անիվը շրջող ճակատամարտ:
3. Քանի դեռ այդ երամակում այդ նարնջագույն հովատակն էր ուրիշ ձի սիրտ չէր անի երևալ երամակի մոտերքը:
4. Երկրագնդի վրա ապրող մեծաթիվ թե փոքրաթիվ բոլոր ժողովուրդների թիվը հասնում է մոտ երկու հազարի:
5. Հզոր աստղադիտակները զիտնականներին տիեզերքի խորքը թափանցելու և երկնային մարմինների ճառագայթումը ուսումնասիրելու հնարավորություն են տալիս:

**38** Ո՞ր նախադասություններում միջոցի անուղղակի խնդիր կա:

1. Ծապնացիները հնուց ի վեր իրենց բոլոր տոները դիմավորում են մեծ շուրջով:
2. Զինացիները տոնական սեղանը զարդարում են կարճ կտրած նարգիզներով:
3. Ես եկել եմ այն վերջնական եզրակացությանը, որ մարդիկ հիանում են իրենց շունեցած հատկություններով:
4. Բոլոր երկրներում մարդիկ սիրով են դիմավորում Նոր տարվա գալուստը:
5. Մշոն դաշտը պատված էր թանձր մառախուղով:
6. Թուլս, փարթան մազերով բարձրահասակ մի տղանարդ էր Լևոնը:

**39** Բառագույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից:

հունցել-շաղախել, բաղդատել-բաժանել, կատակարան-զվարճախոս, թեզանիք-մանյակ, ընչարաղ-ազահ, ընձյուղել-ծլարձակել, գերդաստան-ընտանիք, սանձահարել-զսպել

**40** Տրված բառերից քանիստ՝ և գաղտնավանկի ըն սխալ տեղադրված (տվյալ տեղում գաղտնավանկ չկա):

Ճեռն(ը)տու, ճիւլ(ը)վել, գտ(ը)նվել, լուս(ը)նկա, խնդ(ը)րանք, քն(ը)նել, հազն(ը)վել

**41** Տրված բառաշարքում քանի՞սն են ուժեղ բառի բառաձևեր:

կերել եմ, չկերա, ուտում էին, կուտեր, կերե՛ք, կերած, կուտենք, չեմ ուտի

**42** Ընդգծվածներից քանի՞սն են բայական անդամի լրացում:

Նոր միջավայրը թեև ձանձրալի, բայց հետաքրքիր էր ինձ համար: Օք յոթ ժամ արտագրելով իմ իշխանավորների ստեղծագործությունները՝ քնավ չի մտածում, որ իմ միտքն ու զզացումները օր օրի բթանում են: Ես մի անծանոք մերենայի չնշին մասնիկներից մեկն էի: Ինչ էր անում այդ մեքենան՝ բոլորովին չի հետաքրքրվում: Ինձ համար ծիծաղելի էր այս լրջությունը, որով իմ պաշտոնակիցները կատարում էին իրենց գործը՝ մտազրադ դեմքերով վազվելով մի սեղանից մյուսը:

**43** Նախադասություններից քանիստ՝ պատճառի պարագա չկա:

- Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ չես նայում, Դու իմ գերեզմանն ինչո՞ւ ես խլում:
- Ասում են, թե էն Փարվանա Զահիլներն են սիրավառ, Շտապելուց թե են առել, Դարձել թերև թիթեռներ:
- Էսպես տիկինը տվեց պատասխան. Անհուն ցասումից մոնչաց Շահը:
- Ես քեզնից դառնացած հեռացա, Ես քեզնից հեռացա ու լացի:
- Չուրն ընկանք, կրակն ընկանք, Չմեռանք, բայց և չամրացանք, Խլացանք շատ լսելուց Եվ շատ լրելուց համրացանք:

**44** Պնդումներից քանի՞սն են ճիշտ:

- Արևմտահայերենում թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ գոյականներով արտահայտված ուղիղ խնդիրը դրվում է բառի ուղիղ ձևով:
- Հայոց լեզվի գրավոր շրջանը ունեցել է զարգացման 3 հիմնական փուլ:
- Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում ժխտական դերանուններով արտահայտված ենթակայի ստորոգյալը ձևավորվում է դրական խոնարհման բայով:
- Խ. Արովյանի «Վերք Հայաստանի» վեաը լույս տեսնելուց հետո գրաբարը վերջնականապես դադարում է գործածվելուց:
- Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու է:

**45** Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Միսալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Վերջածանցները միշտ լինում են բառի վերջում:
2. Ի տարբերություն վերջածանցների՝ վերջավորություններով նոր բառ չի կազմվում:
3. Բառը չի կարող սկավել իրար հաջորդող երկու նախածանցներով:
4. Ածանցավոր բառերն ունենում են միայն մեկ արմատ և միայն մեկ ածանց:
5. Բառը կոչվում է բարդ, եթե ունի մեկից ավելի արմատ և ոչ մի ածանց:
6. Ածանցավոր բառի կազմում չի կարող լինել անկախ գործածություն չունեցող արմատ:

## Բ մակարդակ

**46** Համարակալված բառերում բաց բողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Ասուհանաբար մոռանալով խառնիհաղան-(1) առօր-ական(2) հոգսերը և կտրվելով սրտմաշու-(3) ու տա-տկալի(4) մտքերից՝ Երեմ-ն(5) խաղաղ քուն մուավ: Մայրը նայեց որդուն, որ բար-(6) արկի տակ երկար մնալուց խա-շիկի(7) էր նմանվել, զգույշ վերցրեց մա-մարյա(8) ե-ոտանու(9) վրա դրված լաջվար-(10) վերնաշապիկը և դուրս գնաց:

- 1) 1-զ, 4-իւ, 7-փ, 9-ո
- 2) 1-զ, 3-կ, 6-կ, 10-դ
- 3) 2-ե, 4-իւ, 7-փ, 8-ը
- 4) 2-ե, 5-յա, 6-կ, 10-դ

**47** Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են զրվում անջատ:

- 1) մեջք(մեջքի), ի(սպառ), մեկ(իհնգերորդ), դուրս(բերել)
- 2) ալ(կարմիր), տնից(տուն), ըստ(ամենայնի), դեմ(հանդիման)
- 3) հարյուր(մեկ), առ(հասարակ), մեծ(մասամբ), ուր(որ)է
- 4) ի(լրումն), առ(այն), սրբություն(սրբոց), զառ(ի)վայր

**48** Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) մտամոլոր, զբոսայգի, թիկնաթոռ
- 2) տարեմուտ, սանրվածք, մանկական
- 3) խնկարույր, դիպակազարդ, նստակյաց
- 4) գինետուն, ընձուղտ, ծանրաձող

**49** Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **քիսք** – բերանի խոռոչի կամարաձև առաստաղ, **հակամեռ** – մի բանի տրամադիր
- 2) **դրասանգ** – ծաղիկներից պատրաստված հյուսակ, **մրահոն** – սև հոնքեր ունեցող
- 3) **դեղձան** – բաց դեղնագույն, խարտյաշ, **երախտիք** – ուրիշին արված բարի գործ
- 4) **թրծել** – կարծրություն տալու համար այրել, **սողոսկել** – մեկի դեմ դավեր լարել

**50** Ո՞ր տարբերակի նախադասություններում են ընդգծվածները համանուններ:

- 1) Իրիկնաժամին թվերն օրորող հովի պես թեթև Սի ուրու **անցավ**, մի գունատ աղջիկ՝ ճերմակ շորերով...
- 2) **Անցավ** անտես ու աննման էն սիրունը աշխարհից, Ինչպես ծաղիկն անցած զարման, որ չի ծաղկի էլ նորից:
- 3) **Հրիլեզուները** լափեցին երբեմնի հզոր ու հարուստ քաղաքը: Երես **հրիլ** չնատնեին քաղաքը, զուցե մեծ ավարի տիրանային:
- 4) Մեղադրյալը, **ոռող** սրտում, սպասում էր իր դատավճրին: Երբ իհվանդի ջերմությունն իջավ, մարմնի **ոռղն** անցավ:
- 5) **Ետևը սո՞ւր**, առաջը ջո՞ւր, Սու՞զ, վայնասո՞ւն, իրարանցո՞ւմ: Իմ **սո՞ւր**, արթուն ականջում Սի խոր ձեն է միշտ հնչում:

**51** Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) ամրակուռ-խարխուլ, օրենսդիր-ապօրինի, հերաթափ-թափամազ
- 2) հանձին-հակառակ, շեն-ավերակ, խորանանկ-դյուրահավատ
- 3) գեղատեսիլ-անիրապույր, ծանծաղ-խորունկ, ներհակ-իրարամերժ
- 4) կուշտ-անորի, արևոտ-թխապամած, գթառատ-դժնի

**52** Ո՞ր շարքի բոլոր բառերում **ապ-** նախածանց կա:

- 1) ապշահար, ապերախտ, ապառիկ
- 2) ապակատար, ապաքինվել, ապացույց
- 3) ապերասան, ապակեպատ, ապիկար
- 4) ապերջանիկ, ապարանջան, ապակառուցում

**53** Ո՞ր նախադասության մեջ ածական չկա:

- 1) Շեմարանից այդ տարի նույնական հրավեր չեկավ, և օգոստոսի վերջին գյուղի արդեն ջարդված, ճռոացող սայլը տեր Սուրիխանին ու Վահանին տարավ Թիֆլիս:
- 2) Տեղանքը, որն ընտրել էինք հանգստանալու համար, անտառածածկ էր:
- 3) Մեռած քաղաքի համը փողոցներին իջնելու էր ձյունը՝ մեղմելով ամայության ցավն ու տառապանքը:
- 4) Արձրունու միհարկանի տնակը շրջապատված էր պարտեզով, որի մի մասը ծաղկանոց էր:

**54** Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Հեռվից դիտողին ծովը թվում էր մարգարտե ցող՝ երեքնուկի թերթիկներով պատած:
- 2) Կիրակի երեկոները Մակար աղան սովորություն ուներ եկեղեցու ջահերից մեկը վառելու, եկեղեցու դռանը կանգնելու և աղքատների ձեռքին մի-մի սև փող դնելու:
- 3) Կարելի է ասել, որ խանութում կամ տանը նրան ուրախ տրամադրության մեջ կիսանդիպեիր միայն այն ժամանակ, երբ առևտուրը հաջող էր անցել:
- 4) Երբ նա ճանապարհվում էր Ռուսաստան, իմ գործերը բազմապատկում էին, և ես դառնում էի լիակատար կառավարիչ:

**55** Ո՞ր նախադասության մեջ վերաբերական կա:

- 1) Տխուր երեկոն զարկել է վրան. Սիրտս կարոտով կանչում է քեզ, եկ:
- 2) Ինձ ի՞նչ մնաց. ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ:
- 3) Թե կորիվը անխուսափ է, թող չկովեն երկու երկիր, այլ մարդ ու կին:
- 4) Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի, ոչ թե իզուր ծովի վրա:

**56** Ո՞ր տարրերակում ներգործական սեռի միայն մեկ բայ կա:

- 1) Խառնվել են զլխում հինն ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:
- 2) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարարած ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
- 3) Օգոստոսի արևը կիզել էր վտիտ բուսականությունը, և գորշ տափաստանն իր ամայությամբ ճնշում էր բոլոր ճամփորդների հոգիները:
- 4) Պետք է պատրույգը բարձրացնել, և մինչև ձերը հատնի, ավարտել անկրկնելի օրերի պատմությունը:

**57** Ω°ρ շարքի բոլոր բառերն են ենթարկվում վահովման:

- 1) ամառ, տարի, ազգանուն, գիշեր
- 2) երեկ, գարուն, ցերեկ, ժամ
- 3) շաբաթ, ժամանակ, վաղը, այսօր
- 4) ամիս, Ամանոր, երբ, առաջ

**58** Ω°ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Իմ հոգին որպես բափառիկ մի շուն Սհաբե՞կ, անօ՞գ փախչում է հեռուն:
- 2) Փոքրիկը թեթև տաշեղների նման այս ու այն կողմ էր շարտում հույների նավերը:
- 3) Ավին իիմա էլ ողջ է, չնայած սովորական մարմնին գլխի փոխարեն մարդկային գանգ է՝ ամբողջովին կլպված:
- 4) Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որդին անցավ սառցակալած ճանապարհը:

**59** Ω°ր նախադասության մեջ միջադաս դերքայական դարձված չկա  
(նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նա գրում էր երկար անշտապ մոռացած դեպի լուսաբաց թեքվող խավարի մասին այլս չլսելով գիշերային ձայների արձագանքը:
- 2) Կատվի աչքն ընկավ մի սմբած թագավորի վրա որ հասկանալով իր նոտալուտ վախճանը հանկարծ վրայից զցեց պատմուճանը ու նետվեց սանդուղքն ի վար:
- 3) Քնած թե արթուն լսում էր երգը հեռավոր օվկիանի ու հոգին անէանալով աշխարհից տանում էր նրան հեռու մի աշխարհ ուր ոչ վիշտ կար ոչ էլ տառապանք:
- 4) Տղան կանգնում էր ժայռի գլխին պարսատիկը թափով պտտում և քարը զարկված ազրավի պես թարտալով ընկնում էր ձորը:

**60** Ω°ր տարրերակում ընդգծվածը նախադասություն չէ:

- 1) Դժվար է, բայց կփորձեմ՝ **անկախ ամեն ինչից**:
- 2) **Եվս մի վայրկյան**, և արկը հօդս կցնողեցներ ողջ շինությունը:
- 3) **Տոք է**, և ող չկա շնչելու:
- 4) Քայլում ենք մենք փողոցներում, Ես՝ քո սիրով, **ոու՝ որիշին**:

**61** Ω°ր նախադասության մեջ միայն մեկ հատկացուցիչ կա:

- 1) Զյան վրայով սահում էր ուղեկցիս գյուղական նախակերտ սահնակը, և ես այն զգացումն ունեի, թե լուսնի «զաշտերի» վրայով է, որ սահում ենք:
- 2) Ես չունեի ոչ մի նպատակ, ոչ մի երագ՝ բացի տվյալ օրվա պարենս վաստակելուց և հորս պարանոցի վրա մի ավելորդ լուծ շդառնալուց:
- 3) Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին իր աչքերում, երբ առաջին անգամ գնացքի պասուիհանից հայրենի եզերքը տեսավ:
- 4) Հայացքի մեջ զարմանք չկար. գիտեր, որ իրենց քահանան մի տեղին առակ ունի լեզվի տակ, որ իիմա պատմելու է:

**62** Ω°ր նախադասության մեջ ներգրծող անուղղակի խնդիր կա:

- 1) Ժայռերի ստվերու կողերը մամուռով էին պատվել:
- 2) Այգու կողմից մեղմ քամի էր փչում:
- 3) Երեխայի ճիշտ դաստիարակությունից շատ բան է կախված:
- 4) Քամուց սկսվում էին տերևները, մետաղի ձայն հանում:

**63** Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Ես կույր եմ հիմա, անքախտ ու մենակ, Հավերժում կորած մի մոլոր ասուաց:
- 2) ԱՇԽ, նույնն է միշտ քո երգն անձայր, Ինչպես անդարձ մի ճանապարհ:
- 3) Ես գիտեմ մի թովիչ առասպեկտ, Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում:
- 4) Նա վայր դրեց երեխային և հյուրերի հետ դուրս եկավ՝ վանքի բաժինները տեսնելու:

**64** Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ամեն ինչ տվեց հարկի դիմաց և տունը և հողը և ապրանք բայց պարտքը մարելու համար ունեցածը չբավարարեց:
- 2) Իրադարձությունները սկսվեցին հետևյալ կերպ Զարուիի անունով օրիորդի մոտ «խոռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու նրան ձերբակալեցին:
- 3) Մաս և Բյուրականի աստղադիտակը հսկայական մի աշք ուղղված տիեզերական անհունին:
- 4) Մեսրոպ Մաշտոցը հայերեն տառերն ստեղծեց 5-րդ դարի սկզբին Եղեսիայում այդ ժամանակ Հայաստանի թագավորն էր Վռամշապուհը և բերեց Հայաստան:

**65** Ո՞ր հեղինակի ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արակ, զիսարկը ոչ թե ծածկեց, այլ ծածկելիս ուղղակի խվեց զիսին և դուրս գնաց»:

- 1) Նար-Դոսի
- 2) Սուրացանի
- 3) Ա. Բակունինի
- 4) Հ. Մաքենոսյանի

**66** Ի՞նչ նպատակով էր Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր հերոս Աքիսողոս աղան Տրապիզոնից եկել Պոլիս:

- 1) բաղական ընտրվելու
- 2) ամուսնանալու համար աղջիկ ընտրելու
- 3) հարազատներին տեսակցելու
- 4) մայրաքաղաքի մտավորականներին հովանավոր կարգվելու

**67** Ո՞ր նախադասություններում բայի բաղադրյալ ժամանակաձև կա:

1. Նա ոչ մի անգամ հետ չնայեց ու չտեսավ, թե ինչպես է պանդկապանը աշխույժ խոսում ու մատուլ ցույց տալիս իր կողմը:
2. Նա ինձ դուր է գալիս, ու ես կփորձեմ հաճոյանալ նրան:
3. Ինքնաստինքյան հասկանալի էր, որ չկարողացա շատ բան անել մարդկանց կատարյալ դարձնելու համար:
4. Զգաց, որ պետք է շտապեր, արագ գործեր, բայց ապարդյուն:
5. Աշխարհում ապրող ամեն մարդ իր նպատակին է ձգտում:

## **68 Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:**

Մոտավորապես 30-54 միլիոն տարի առաջ այժմյան Լիքիայի տարածքում ապրում էին մասսողություններ, ծովային կովեր, 50 ոտնաչափ երկարությամբ սողուններ, ներկայիս ոնզեղջյուրի մեծության բորենիններ: Այս խոշոր ու տարօրինակ կենդանիններից վտանգավորը բորենիններն էին, որոնցից, ըստ գիտնականների ենթադրության, պետք է որ սարսափահար փախչելիս լինեն մյուսները:

Հիշյալ կենդանինների կմախքների մնացորդները հայտնաբերվել են նաև որոնողների կողմից Սիցերկրականի ափերից 200 մղոն դեպի հարավ գտնվող վայրում:

Այդ հայտնագործությունից հետո տվյալ շրջան ուղարկվեցին գիտնականներ, որոնցից մեկը՝ Սևիջը, կարողացավ հայտնաբերել բորենու ամբողջական պահպանված հսկայական կմախք, ինչպես նաև հնագույն հսկա փղի՝ 120 սմ երկարությամբ մարզարտավարդագույն ժանիքներ: Որոշ ժամանակ անց Սևիջին պարզ դարձավ իր ուսումնասիրած կենդանինների, դրանցից հատկապես գիշատչի՝ բորենու վտանգավորության չափը: Այդ հսկա բորենու ծնոտը, որքան էլ զարմանալի է, ընդունակ էր լսն քառակուսու վրա 20 սովորական ծանրությամբ կծել: Ակնհայտ էր, որ «սարսափելի ժամանակների» ամենատիրական գիշատիչներից մեկը հենց բորենինները պետք է լինեն:

1. 30-54 միլիոն տարի առաջ ապրած փղերի մաշկը, ի տարբերություն ներկայիս փղերի, վարդագույն երանգ է ունեցել:
2. Սևիջի ենթադրությունը՝ բորենինների վտանգավորության մասին, հիմնված էր դրանց ծնոտի ուսումնասիրության վրա:
3. Ըստ Սևիջի դիտարկման՝ հայտնաբերված բոլոր կմախքները պատկանել են գիշատիչ կենդանինների:
4. Գիտնականները պարզեցին, որ հնագույն կենդանիններից ամենախոշորը եղել են բորենինները:
5. Ծովային կովերի երբեմնի գոյությունը ի հայտ եկավ շնորհիվ նաև որոնողների:

## **69 Ո՞ր նախադասություններում գոյականով արտահայտված ենթակա կա:**

1. Տեսնես ի՞նչ էին ասում իրար, Երբ լսում էին դողանջը մեր, Մանուկ արևը սարերն ի վար Եվ մեռնող մութը ձորերն ի վեր:
2. Ինչպե՞ս ապրեմ առանց քեզ, Սիրելի՝ Պարույր. Դու հաց էիր ինձ համար, Օդ էիր ու ջուր:
3. Ո՞վ պիտի զա. գուցե գումաստ մի ստվեր Լուս ներս սողա ու նորից լուս չքանա:
4. Կա խորհրդավոր մի հրապուրանք քո շարժումների անխոս զրույցում:
5. Ես ձեր խիդճն եմ, ինձ մի՛ խարեք, Ձեր թերեն եմ, ինձ մի՛ կապեք:
6. Կուզես պայթի՛ր, կուզես ճշա՛. Սեզ մարդու տեղ դնող չկա:

## **70 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Ճիշտ է, Սխալ է, Զգիտես տարբերակներից որևէ մեկը:**

1. **Վ**ածանց ունեցող բայերը ոչ միշտ են կրավորական սեռի:
2. Որոշ բայերի հարակատար կամ ենթակայական դերբայները դարձել են գոյականներ:
3. **Գայլ, տայլ, լայլ** բայերը համակատար դերբայ են կազմում կանոնավոր բայերից տարբեր ձևով:
4. **Ուտել, լինել, գնալ, դառնալ** բայերի անցյալ կատարյալը, վաղակատարը, հրամայականը կազմվում են արմատի փոփոխությամբ:
5. Ածանցավոր բայեր են այն բայերը, որոնց կազմում կա որևէ (բայական կամ այլ) ածանց:
6. **Ն, չ** սոսկածանց ունեցող բոլոր բայերը չեզոք սեռի են: